

Անսովոր երագ (ծածկանունը՝ Անտիկոմունիստ)

Հիշում եմ, որ երբ արթնացա, ուշ գիշեր էր: Նստեցի անկողնուս մեջ, տրորեցի աչքերս ու փորձեցի հասկանալ՝ ինչու եմ արթնացել: Հանելուկն ինքնըստինքյան լուծվեց, որովհետև սենյակի կիսաբաց դռնով մթությունը ճեղքելով՝ բարձիս վրա մի կապույտ լույս էր ընկնում: Անսովոր ցուրտ էր, կարծես, միջանցիկ քամի լինեք սենյակում: Լույսը գալիս էր հարևան սենյակից, սակայն չէի կարողանում հասկանալ, թե ինչ է դա: Երբ կռացա, մթության մեջ փորձելով հողաթափերս գտնել, զգացի որ ինչ-որ մեկն արագ անցավ մյուս սենյակում, որովհետև այդ տարօրինակ լույսը մի ակնթարթ մարեց ու կարծես թե ոտնաձայներ հիշեցնող ինչ-որ տմբամբոց եկավ: Անկեղծ ասած՝ մի փոքր վախեցա:

-Հայրիկ,- բացականչեցի ես,- դու ե՞ս:

Ոչ մեկը չպատասխանեց, հավանաբար, ինձ ուղղակի թվացել էր: Լսողությունս լարեցի: Ականջիս քամու սվսվոց եկավ. հարևան սենյակի լուսամուտը բաց էր: Հագա հողաթափերս ու երբ մոտենում էի դռանը, կրկին լույսը մարեց՝ ուղեկցվելով հատակի ճռռոցով. ակնհայտ էր, որ կողքի սենյակում ինչ-որ մեկը կար:

-Մարդ կա՞ այդտեղ,- հուսաբեկ հարցրի ես: Ոչ մի պատասխան: Մարմնովս սարսուռ անցավ, բայց չհասկացա վախի՞ց էր, թե՞ ցրտից, որովհետև դրսից, իրոք, սառը քամի էր թափանցում ներս: Որոշ ժամանակ կանգնեցի դռան մոտ՝ չհամարձակվելով ներս մտնել: Եթե տանեցիներից մեկն է, ինչո՞ւ չի պատասխանում: Դուրը բացելով, տեսա սեղանի վրա դրված մի քանի մումեր, որոնցից էլ գալիս էր այդ տարօրինակ կապույտ լույսը: Սենյակում մարդ չկար, իսկ պատուհանը իրոք բաց էր, այնպես որ գիշերային սառը քամին անարգել ներխուժում էր ներս: Նայեցի շուրջս. ամեն ինչ սովորական էր, ինձ ծանոթ բազմաթոռները, կահույքը, սեղանը: Միայն թե որտեղից էին հայտնվել այդ մումերը, որոնք զարմանալիորեն չէին հանգչում քամու հոսանքից: Պատուհանը հարկավոր էր փակել: Հազիվ էի քայլերս ուղղել դեպի բաց փեղկերը, երբ հետևիցս կրկին զգացի նույն ստվերն ու ոտնաթաթերի ձայնը: Շրջվեցի. բացի պատին կախված հայելուց ու փոքրիկ պահարանից ոչինչ չկար:

-Մարդ կա՞ սենյակում,- հարցրի ես տազնապած: Կրկին ոչ մի պատասխան: Նյարդերս այնքան էին գրգռվել, որ ինձ թվում էր, թե սենյակի բոլոր առարկաները կենդանի են ու հետաքրքրությամբ ինձ են նայում: Ես դանդաղ մոտեցա հայելուն: Արտացոլանքս լավ չէի տեսնում, որովհետև մումերի լույսը միայն աղոտ կերպով էր լուսավորում սենյակի այս անկյունը: Ես ինչ-որ վատ բանի կանխագագացում ունեցա, սակայն աչքերս չէի կարողանում կտրել հայելուց: Երբ նայեցի հայելու մեջ, ով երկնքի հրեշտակներ, վախից քիչ էր մնում տակս լցնելի. այնտեղից ինձ էր նայում մեռած կնոջ սարսափելի մի դեմք՝ ուռած շրթունքներով, սպիտակ, հողախառն մազերով, առանց բիբերի աչքերով: Երևի այդ պահին ուժեղ գոռացել եմ, որովհետև կոկորդոս մի տեսակ ցավեց: Լավ է, որ այդ աչքերը բիբեր չունեին, որովհետև եթե որևէ կենդանի էակ ընկղմվեր այդ սատանայական հայացքի մեջ, անպայման կխելագարվեր: Ես խայթվածի պես հետ ցատկեցի ու «հայրիկ» գոռալով ինչքան ոտքերումս ուժ կար

վազեցի դեպի տան առաջին հարկ տանող աստիճանները: Թիկունքիցս կարծես զգում էի այդ վայրագ հայացքը, այդ նեխած դեմքի սպիտակուցները, հողոտ գլուխը:

Չնայած հազիս հողաթափեր էին, սակայն աստիճաններով ցած իջա, ավելի ճիշտ վայր ընկա քամու արագությամբ, ոտքս դիպավ ինչ-որ արգելքի ու գլորվեցի հատակին: Երբ ուշքս տեղը եկավ, փորձեցի վեր կենալ, սակայն զգացի, որ ինչ-որ բան պահում է ոտքս: Հետ նայեցի, ու կիսախավարի մեջ, տեր աստված, տեսա նույն դեմքը: Դիմացս մեծ կրծքերով մի մերկ կնոջ մարմին էր, ոնց որ կենդանացած մեռել լիներ ու երևի հենց այդպես էլ կար, որովհետև անտանելի հոտ էր գալիս, ասես, ինչ-որ սատկած կենդանի էր նեխել (կամ էլ, իրոք տակս էի, արել): Այդ մսագունդը իր թաթերով բռնել էր ոտքս ու սողում էր դեպի ինձ՝ օձի պես լեզուն դուրս հանած ու ֆշշացնելով: Սենյակի տարբեր անկյուններից նրան ձայնակցում էին ուրիշ մեռելներ, մերկ կանանց մարմիններ, որոնք իրենց ձեռքերն իմ ուղղությամբ մեկնած՝ սողում էին դեպի ինձ: Տեսարանն այնքան զզվելի ու նողկալի էր, որ մինչև հիմա զարմանում եմ, թե ոնց գիտակցությունս չկորցրի:

-Օգնե՛ք,- ոռնացի ես՝ անգոր թպրտալով, փորձելով ոտքս ազատել մեռելի ձեռքերից, որովհետև այդ հրեշը ինձ քաշում էր հետ՝ իր ճանկը: Ձեռքս մեկնեցի առաջ, փորձելով ինչ-որ բանից կառչել: Ինչ-որ ծանր բան շոշափեցի (չտեսա, թե ինչ էր, երևի կրակ խառնելու երկաթյա ձողն էր), վերցրի ու դիվոտած սկսեցի հարվածել հրեշի մագոտ թաթերին: Միաժամանակ առաջ սողացի, ու զգալով, որ ոտքս ազատվել է, գլորվեցի առաջ, կանգնեցի ու ինչքան ուժ ունեի վազեցի դեպի տան մուտքի դուռը:

-Արի այստեղ, պուպսի՛կ,- լսեցի հետևիցս դիակի ձայնը:

-Կանգնիր հիստերիկ, -ձայնակցեցին մյուսները:

Սակայն ես վազում էի առանց հետ նայելու, ներսումս միայն մի զգացողություն էր՝ սարսափ, որ զգում էի անգամ մազերիս ծայրով: Հայտնվելով դռան մոտ՝ առանց կանգ առնելու, ամբողջ թափով խփեցի դռանը ու միաժամանակ օգնություն կանչեցի: Գիտեի, որ դուռը փակ է, որովհետև հայրս ամեն երեկո կողպում էր տան դուռը: Կաղնեփայտե հին դուռը միայն թեթև ճռռաց: Խփեցի նորից, սակայն անարդյունք, մինչդեռ հետևիցս սողացող դիակների ձայնը լսվում էր ավելի ու ավելի մոտիկից:

-Ուուուուուուուուուուու.....,- ոռնում էին այդ հրեշները: Ես սկսեցի ավելի ուժեղ խփել դռանը՝ պետք էր այն կոտրել մինչև նրանք կբռնեին ինձ: Երբեք չեմ մոռանա այդ տեսարանը՝ սենյակի տարբեր կողմերից դեպի ինձ էին սողում տասնյակ տկլոր, մեծ կրծքերով, կիսափտած, ուռած ու այտուցված դեմքերով, փարթամ հետույքներով, կարծես գերեզմանից հենց նոր դուրս սողոսկած պառավների մամիններ: Երբեք չեմ մոռանա երախներից դուրս ընկած այդ երկար կանաչավուն լեզուները:

-Մա՛յրիկ,-գոռացի ես, - փրկի՛ր ինձ: Ես շրջվեցի ու ամբողջ ուժերս կենտրոնացնելով՝ մեկ հարվածով խփեցի դռանը: Դուռը կոտրվեց, ու ես տախտակների հետ միասին գլորվեցի դուրս: Առանց վայրկյան կորցնելու՝ ոտքի թռա ու սլացա դեպի փողոց: Ուշ գիշեր էր, այնպես որ ոչ ոք չկար: Հրեշների ձայները մարեցին հեռվում: Հասկանալով, որ պետք է օգնություն կանչել ես որոշեցի մտնել հարևաններից մեկի տուն ու ամեն ինչ պատմել: Տներից մեկի պատուհանից լույս էր վառվում. դա տիկին Աննայենց տունն էր (տիկին Աննան միայնակ ապրող թեթև

վարքի տեր կնոջ համբավ ուներ մեր թաղում): Վերջերս, երբ անցնում էի փողոցով, հաճախ էր դռան շեմքից նայում ինձ: Հարևաններից ոչ մեկ չէր շփվում այդ կնոջ հետ, ու ոչ ոք չգիտեր, թե նա ինչով է զբաղված իր կիսախարխուլ տնակում: Ես էլ էի վախենում այդ կնոջից, որովհետև զգում էի նրա վավաշոտ հայացքները, սակայն վիճակն այնպիսին էր, որ պետք էր դիմել նրան: Ես ցատկեցի քարե պարսպի վրայով, մտա տիկին Աննայի տանձենիների այգին ու արահետով քայլեցի դեպի տուն: Հայտնվելով շքամուտքի մոտ, ձայն տվեցի, սակայն ոչ ոք չպատասխանեց: Պատուհանից երևացող լույսը և հեռուստացույցի ձայնը ասում էին, որ ներսում մարդ կա:

-Տիկին Աննա,- կանչեցի ես, ու պատասխան չլսելով՝ հրեցի դուռը: Մտա մի երկար միջանցք, որի ծայրում դեպի ձախ ևս մի դուռ էր կիսաբաց. այդտեղից էր գալիս հեռուստացույցի ձայնը: Միջանցքում օդը հագեցած էր խոնավությամբ ու փտած տախտակների հոտով, իսկ հատակին մի հին, մաշված գորգ էր փռած: Զգուշությամբ քայլեցի գորգի վրայով՝ աշխատելով աղմուկ չբարձրացնել: Հասնելով միջանցքի ծայրը՝ նայեցի սենյակից ներս: Սենյակում կիսամութ էր, միայն հեռուստացույցի լույսն էր լուսավորում էժանազին կահավորանքը ու հատակին փռված գորգերը: Սենյակի անկյունում ժանգոտված երկաթյա մահճակալի վրա մեջքով դեպի ինձ նստած էր տիկին Աննան՝ ամբողջությամբ մերկ: Փարթամ մազերն ընկած էին պարանոցին ու մերկ մարմինը քրտինքի մեջ էր:

-Տիկին Աննա,- շնջացի ես: Չըջվեց: -Ինձ օգնություն է հարկավոր, այնտեղ հրեշներ կան:

-Չեք լսում ինձ, - համարյա բղավեցի ես, որովհետև չէի տեսնում նրա դեմքը,- դե շըջվեք վերջապես:

Ինձ թվաց, որ նա հեկեկում է և ափերով փակել է դեմքը: Ձեռքով հպվեցի մերկ ուսին: Հանկարծ նա կատվի արագությամբ շըջվեց, ինձ նայեցին նույն դիվային արյունոտ աչքերը, նեխած դեմքը, մեծ մազոտ կրծքերը:

-Բռնվեցիր,- Ֆշացրեց այդ հրեշը ու լայրծուն թաթերով ճանկեց ինձ:

-Ոոոոոոոոոոոչ,- գոռացի ես ու վեր թռա անկողնումս:

- Տեր աստված,- ձեռքերով սկսեցի շնչակտուր շոշափել անկողինս, համոզվելու համար, որ երազ էր: Վառեցի լույսը ու համոզվելով, որ ամեն ինչ երազում էր, խորը շունչ քաշեցի: Մարմինս ամբողջությամբ սառը քրտինքով էր պատված, շնչում էի ծանր, հևալով: Մի քանի րոպե պահանջվեց, որ ուշքի գամ մղձավանջից:

Լույսն արդեն բացվում էր: Անկողնուս կողքին, աթոռի վրա դրված էր նոթբուքս: Հիմա հիշեցի՝ երեկ ամբողջ երեկո ինտերնետում էի անցկացրել ու քնել էի: Նոթբուքս չէի անջատել, հանգստի ռեժիմում էր: Մկնիկին ձեռք տվի, եկրանը բացվեց՝ լի էրոտիկ լուսանկարներով: Հիմա հասկացա, թե ինչ գործ ունեին տկլոր կանայք իմ երազում: Խորը հոգոց հանեցի ու փռվեցի անկողնում:

-Սամ, ամեն ին կարգին ա՞՞,- լսեցի ընկերոջս ձայնը կողքի սենյակից,- վեր կաց, ուշացանք դասից: